**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-25/138-1»**

ք. Աբովյան «26» դեկտեմբերի 2025թ.

Աբովյանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Բաբայանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԼՅՈՒ ՍԹՐԻՄ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջան 2-րդ թաղամաս, 6-րդ միկրոշրջանի Արցախի փողոցի հարակից թվով 50 բնակելի տների, Հաղթութ թաղամաս 5-րդ միկրոշրջան 4-րդ փողոցի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների, Աբովյան համայնքի Գեղաշեն բնակավայրի 1-ին թաղամաս 9-րդ փողոց, 1-ին թաղամաս 5-րդ փողոց, 1-ին փողոց 77 հասցեից մինչ 1-ին փողոցի 76 հասցե, 3-րդ փողոց 58 փնից մինչ 3-րդ փողոց 62 փուն գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների, Աբովյան համայնքի Վերին Պտղնի բնակավայրի Նորավան թաղամասի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների, Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի 12-րդ փողոցի մնացած մաս, 15-րդ փողոցի փակուղիներ. 13-րդ փողոցի մնացած մասի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների*** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

***2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

***2.2 Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 3 765 000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

***Պայմանագրի գնի 40 տոկոսը տրամադրվելու է ՀՀ Կառավարության կողմից, ավարտական ակտը ստորագրելուց հետո, սուբվենցիաների տրամադրման կարգի և ժամկետների համաձայն:***

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

**5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝**

**ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,**

**բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:**

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանակապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Աբովյանի համայնքապետարան | <<Բլյու Սթրիմ Սոլուշնս>> ՍՊԸ |
| ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 | Ք.Երևան Նոր Նորք ՎՁ Լվովյան 3/6 |
| ՀՎՀՀ՝ 03561498 | Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ |
| բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ | Հ/Հ 20508221314461001 |
| Հ/Հ 900102462315 | ՀՎՀՀ 00910183 |
| | Տնօրեն՝ Հ.Դավթյան |
| --------------------------------- | --------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Է. Բաբայան | Հ. Դավթյան |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 26 » դեկտեմբերի 2025թ. կնքված
«ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-25/138-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Աբովյան համայնքի 2026 թվականի կարիքների համար գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ**

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Հասցե | Չ/Մ | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 71241200 | Աբովյան համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման խորհրդատվական աշխատանքների կատարման համար նախատեսել ներքոնշյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքներ. 1-Իրականացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում: 2- Ներկայացնել մանրամասնորեն | Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջան 2-րդ թաղամաս, 6-րդ միկրոշրջանի Արցախի փողոցի հարակից թվով 50 բնակելի տներ,Հաղրութ թաղամաս 5-րդ միկրոշրջան 4-րդ փողոցի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման խորհրդատվական աշխատանքներ | դրամ | 1195 000 | 1 | Պայմանագիրն /համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 2 | 71241200 | | Աբովյան համայնքի Գեղաշեն բնակավայրի 1-ին թաղամաս 9-րդ փողոց, 1-ին թաղամաս 5-րդ փողոց, 1-ին փողոց 77 հասցեից մինչ 1-ին փողոցի 76 հասցե, 3-րդ փողոց փողոց 58 տնից մինչ 3-րդ փողոց 62 տուն գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման խորհրդատվական աշխատանքներ | դրամ | 995 000 | 1 | Պայմանագիրն /համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 71241200 | կատարված ուսումնասիրություններ ի արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ: | Աբովյան համայնքի Վերին Պտղնի բնակավայրի Նորավան թաղամասի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ | դրամ | 895 000 | 1 | Պայմանագիրն /համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ |
| 4 | 71241200 | 3- Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն;<br>4- Նախագիծը ներկայացնել 5 օրինակից;<br>5- Նախագծա-նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Աբովյանի համայնքապետարանի հետ.<br>6-Նախագիծը համաձայնեցնել և իրականացնել տեխնիկական պայմանների ստացումը /ըստ անհրաժեշտության/ շահագրգիռ կազմակերպություններ ից, ինչպիսիք են Հայաստանի Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր, Հայաստանի էլեկտրական ցանցեր, | Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի 12-րդ փողոցի մնացած մաս, 15-րդ փողոցի փակուղիներ. 13-րդ փողոցի մնացած մասի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ | դրամ | 680 000 | 1 | Պայմանագիրն /համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից 30-րդ օրացուցային օրը ներառյալ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Վոլիա ջուր, Թիմ և հնարավոր այլ կազմակերպություններ ի հեփ, որոնք ունեն փվյալ վայրում գործող կոմունիկացիաներ;<br>7- Ներկայացնել կապալի օբյեկփի, դրա առանձին մասերի (կոնսփրուկցիաներ և այլն) և օգփագործված նյութերի երաշխիքային ժամկեփներին ներկայացվող նվազագույն պահանջները;<br>8- Ներկայացնել աշխափանքների կափարման համար պահանջվող լիցենզիային, փեխնիկական միջոցներին, աշխափանքային ռեսուրսներին և մասնագիփական հափկանիշներին ներկայացվող պահանջները;<br>9- Նախագիծը ներկայացնել էլեկփրոնային կրիչով:<br>10- Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռուսերեն լեզվով:<br>11- Աշխափանքների վճարումը կիրականացվի | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102462315

---------------------------------
/ստորագրություն/
Է. Բաբայան
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Բլյու Սթրիմ Սոլուշնս>> ՍՊԸ
Ք.Երևան Նոր Նորք ՎՀ Լվովյան 3/6
Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050822131446100 1
ՀՎՀՀ 00910183
Տնօրեն՝ Հ.Դավթյան

---------------------------------
/ստորագրություն/
Հ.Դավթյան
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 26 » դեկտեմբերի 2025թ. կնքված*
*«ԱԲՀ-ԲՄԽԱՇՁԲ-25/138-1» ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200 | *Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջան 2-րդ թաղամաս, 6-րդ միկրոշրջանի Արցախի փողոցի հարակից թվով 50 բնակելի վների,Հաղթութ թաղամաս 5-րդ միկրոշրջան 4-րդ փողոցի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային և փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ* | Համայնքի մասնաբաժին | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| | | | Պետության մասնաբաժին /սուբվենցիա/ | % | | | | | | | | | | | | **Աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումն հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո:** |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 71241200 | *Աբովյան համայնքի Գեղաշեն բնակավայրի 1-ին թաղամաս 9-րդ փողոց, 1-ին թաղամաս 5-րդ փողոց, 1-ին փողոց 77 հասցեից մինչ 1-ին փողոցի 76 հասցե, 3-րդ փողոց փողոց 58 պնից մինչ 3-րդ փողոց 62 պուն գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային և փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ* | Համայնքի մասնաբաժին | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| | | | Պետության մասնաբաժին /սուբվենցիա/ | % | | | | | | | | | | | | **Աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորում հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո:** |
| 3 | 71241200 | *Աբովյան համայնքի Վերին Պտղնի բնակավայրի Նորավան թաղամասի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային և փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ* | Համայնքի մասնաբաժին | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| | | | Պետության մասնաբաժին /սուբվենցիա/ | % | | | | | | | | | | | | **Աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորում հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո:** |
| 4 | 71241200 | *Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի 12-րդ փողոցի մնացած մաս, 15-րդ փողոցի փակուղիներ. 13-րդ փողոցի մնացած մասի գազաֆիկացման աշխատանքների* | Համայնքի մասնաբաժին | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբերի | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | *իրականացման նախագծանախահաշվայի ն փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ* | Պետության մասնաբաժին /սուբվենցիա/ | | **Աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումն հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո:** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102462315

---------------------------------------
/ստորագրություն/
Է. Բաբայան
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Բլյու Սթրիմ Սոլուշնս>> ՍՊԸ
Ք.Երևան Նոր Նորք ՎՁ Լվովյան 3/6
Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 20508221314461001
ՀՎՀՀ 00910183
Տնօրեն՝ Հ.Դավթյան

---------------------------------------
/ստորագրություն/
Հ. Դավթյան
Կ.Տ